

ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

ԿԱՄ

ՍԿԶԲՆԱԻՌՐՈՒԹԻԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

(Շարունակութիւն. տես յ'էջ 241)



ԱՏ դիտողութեան արժանի է ընդհակառակն, թէ ինչպէս սակաւ մաս գտաւ Հայաստանի մէջ մազպեզանց կրօնքն, հակառակ բունն ճգանց և ձեռնտուութեան Սասանեան պետութեան: Այս դիպումս մէջ սակայն բազաքական պատճառ մի ևս կայր. արտաբայ կարգի սաստիկ յարումն և հաւատարմութիւնն առ տունն Արշակունեաց¹ նկատել կու տայր Պարսից թագաւորը իբր սիւնրիմ՝ թշնամի: Ոչ միայն քրիստոնեայ հայք՝ այլ և հեթանոսք՝ բնաւ չէին ուզեր ընդունել պարսիկ մագերուն կրօնքը: Պատմութեան² մի համեմատ, որ սակայն կրնայ առարկութեանց նիւթ լինել, իբր թէ պարսիկք բռնութեամբ մուծեր էին զայն՝ իրենց տիրապետութեան ժամանակ՝ Գ. դարու մէջ, և կործաներ էին հին կուրքերը: Բայց նոյն իսկ Գ. դարու մէջ ի սպառ օտար և անծանօթ համարուած է այդ: Երկու ուրացողքն՝ Մերուսան Արծրունին և Վահան Մամիկոնեան, որք շատ տեղերու մէջ կրակատուներ (ատրոնշանք) շինեցին, բոլորովին անոք և առանձին մնացին, և ոչ իսկ հարազատ ընտանեաց մի-

ջէն իրենց հետևողներ գտնելով՝: Նոյն իսկ Պապ թագաւորին միջոց, որ քաղաքակաւսութեն Պարսից կողմը անցաւ և բոլորովին հեթանոս յետաշրջութիւն մի սկսաւ, և շատերը թագաւորին հրամանաւ դարձեալ կուրքեր սկսան շինել և պաշտել³, բնաւ կրակապաշտութեան հաստատուելուն զազափար անգամ չի կայ:

Հրէութիւնն, ընդ հակառակն, սաստիկ բունն ազդեցութիւն ունեցեր է հին քրիստոնեայ Հայաստանին վրայ: Յայտնի է Մ. Խորենացիէն, թէ Հայաստանի բարձր աշուականութիւնն ինչպիսի եռանդեամբ եբայական կամ գէթ հին կտակարանական ծագումն կ'ընծայեր իրեն: Արշակունիք անգամ, կ'ըսուէր թէ, Աբրահամէն և Քեաւուրայէն սերեալք էին, Ազարատունիք՝ Նաբաքոնոսորի ժամանակակից Միջատ անունով նշանաւոր հրէի մի սերունդք կը համարուէին, Արծրունիք և Գնունիք՝ Սենեքերեմի որդւոց՝ որոնք Հայաստան փախեր էին, Ամասունիք՝ Սամսնի հօրը Մանուէին, և այլն: Աստուածաշնչի աւանդութեանց այս կապակցութիւնն կը գտնուի նաև ուրիշ արեւելեան ժողովրդոց մէջ, որոնք ինքնուրոյն կեանք մի կը վարէին, անջատուածք հողմէական կայ-

1. Սոցա մասին շատ զօրաւոր բացատրութիւններ կը գտնուին առ Փաւստոսը. Գ, Ե. Գ, ԾԵ. Ծ, Է և Լ. Ե. և այլն:
2. Մովս. Խոր. Բ, ԼԵ.

1. Փաւստ. Գ, ԾԵ, էջ 179.
2. Փաւստ. Ծ, ԼԱ, էջ 230.

սերութենէն, ինչպէս Լին Վրացիք և Աբխ-
սինիացիք, որոնք իրենց թագաւորները Դաւ-
թէն և Սողոմոնէն սերեալ կը համարին¹ :
Այսպիսի դրոյքք միայն խորենացոյ ժամա-
նակին յեն պատկանիր, լիսն զի փաստոսի
ևս ծանօթ է հին հայկական պատմութեան
վրայ եղած հրեական ազդեցութիւնն : Ըստ
իրեն վկայութեան, ինչպէս նաև ըստ խո-
րենացոյ, Տիգրան բազմաթիւ հրեաներ բե-
րբ է ի Հայաստան՝ հանդերձ իրենց Հիւր-
կանոս քահանայապետով : Հայաստանի շատ
քաղաքներու մէջ բնակչաց մեծ մաս մի,
մանաւանկ թէ յաճախ մեծազոյն մտոր, հրեա-
կան ծագումն ունէին² : Բայց արդեօք նորա
ստուգի բնիկ երբայեցիք էին : Մովսէս³ կը
պատմէ, թէ Արտաշատու և Վաղարշապատու
հրեայք Տրդատայ ատեն քրիստոնեայ դար-
ձան : Այս բանս սակայն տարակուսական կը
թուի սակաւ մի : Գրեթէ փորձութիւն կ'ու-
նենք հաւատալու, թէ մաս մի հայ տա-
ղովրդեան⁴ ստուգի պարծանք կը համարէր
իրեն երբայական ծագումն ունենալը, իբր
աղնուականութեան պատուանուն⁵ : Հրեա-
թեան նպատաւոր սոյն նկարագրին հետ
սերտ առնչութիւն ունի՝ նախկին հայ քրիս-
տոնէութեան տեսակ մի հին կտակարանա-
կան գրովք : Երբայեցոց պատմական գրք-
քերու ներշնչած զիցազնական հոգին աւելի
ախորժելի էր պատերազմի կամ զինուորա-
կան ազնուականութեան, քան նոր կտակա-
րանին քաղցր վարդապետութիւնն : Ինչ որ
չի կրցաւ գրուի հանել Նեեկեփոստ կայսրն
քահանայից հետ միասին, կրցաւ զայն ընել

միայնակ կաթողիկոսն Վրթանէս : Պարսից
ղէմ եղած պատերազմը՝ կրօնական պատե-
րազմ հրատարակեց նա, որուն մէջ մեռնող-
ները մարտիրոսաց կարգը կը դասուէին, և
ննջեցեցող տարեկան յիշատակին օրը անվի-
շապէս գուրբերէն վերջը նոցա անուանքը կը
յիշուէին : Վասն զի նոքա, կ'ըսէ, պատե-
րազմի խառնուրդին մէջ մեռան, ինչպէս
Մատթիա և Յուդա Մակաբէ և իրեն եղ-
բայրներն : Այսպէս նաև Ներսէս, պարս-
կական պատերազմի մեծ վտանգին միջոց,
բարբառ աշխարհին մէջ աղօթք կը պատուիրէ,
ըստ օրինակի հին կաակարանին : Գարձեալ՝
պարսկական պատերազմին ժամանակ Մով-
սիսի հետ կատարեալ նամակութիւն մի կը
գտնենք, որ Ամուղեկացոց զէմ կուտելու
ժամանակ՝ լեբան զուխը աղօթեց. Ներսէս
կաթողիկոսն Պապ թագաւորին հետ Նպատ
լեբան զուխը կ'ելնէ պատերազմին միջոց-
կ'աղօթէ նա բազկատարած, և այս աղօթից
գօրութեամբ կը յաղթէ Հայոց բանակն :
« Ստեպ կաց յաղօթս և աղաչեա զՏէր,
մինչ զեռ խառնուրդքս են », կ'ըսէ թագա-
ւորն⁶ :

Ինչպէս յայտնի է, եթովպացի քրիստո-
նեայ թագաւորք այնու ևս Դաւթի և Սողո-
մոնի օրինակին հետեցեան, որ բազմակնու-
թիւնը պահեցին՝ իբրև իխանական աւան-
ձնաշնորհութիւն : Այս բանիս ազօտ հետքեր
կը ցուցնէ նաև քրիստոնեայ Հայաստանը :
Արշակ թագաւորն, թէ և իւր փառանձեմ
կնովմէն որդի մի ևս ունեցեր էր, քաղա-
քական պատճառաւ համար կ'ամուսնանայ
Ուլուպիա անուամբ յոյն իշխանուհոյ մի հետ :
և վերջը, երբ սա կը թունաորուի իւր նա-
խանձորէն, Պարսից արքայից արքային դուստ-

1. v. Gutschmid, Kl. Schr. III S. 295.
2. Փաւստ. Գ, ԾԵ. ուր ստուգի թուերն կը ցու-
ցնեն նոյննակէն շափազանցութիւնը : Ար Խառնի և
քրայական զաթականութեանց վրայ Արտաշատ, ի Վա-
ղարշապատ, յԵրուսաղեմաց, ի Զարեհուան, ի Զա-
րէշատ, ի Վան և ի Նախուան :
3. Մ. Խոր Գ, ԽԵ :
4. Թեբան Ասորիք և Հելլէնք, զորս Տիգրան բե-
րաւ և մտայց բախութեամբ Հայաստանի մէջ :
5. Մեծն Բարսեղ (Թուղթ 323) յայտնապէս կը ծա-
նոցանէ առ Եպիփան եպիսկոպոսն, թէ կապաղովկոյ
մեզերն (տ՛ տ՛ն Μαγοσσαίων έθνος) Աբրահամէ յեն
սերբեր. τας δε έτι του 'Αβρααμ γενεσιλογίας οδδεις
ημιτι μέγιστο του παρόντος τόν μάγυν εμφοδολγησησ.
Յուդա և թէ Եպիփան որքից սոչ զաստ՛ արցւց է ինի
պարսիկ մեզերուն Աբրահամէ սերբուան աւանդութիւնք :

1. Փաւստ. Գ, ԺԱ, էջ 28. « Ձի սոցա, սակէ, ի
նմանութիւն Մատթիայ և Յուդայ Մակաբէի անկան
ի Կապա պատերազմի, և նմանութիւն եղբարց նորա » :
Անուշաչի օրինակոյ մի փոփոխեր է անունները,
մինչդէռ Մակաբէ մահանունն քննկանաբար Յուդայի կը
պատկանի : Այս բանս յառաջ բերբ է սխալ գրու-
թիւն մի, և զորուք է նոցա փոխանակ նորի : Չենք
կրնար կարծել որ կամ Վրթանէս և կամ Փաւստոս
սոյպիսի խառնակ զապախարներն ունեցած լինին Աս-
տուացոց ազգաբանական առնչութեանց մասին :
2. Փաւստ. Ե, Դ, էջ 195.

բը իրեն կնութեան կ'որչէ առնուլ¹ ։ Գրը-
խուսը ներքինին և կանանոցի վարչին (մարդ-
պետ կոչուած), սովորաբար հայր տխրոցը կը
կրէր, և որչափ որ կը տէէր թագաւորու-
թիւնը՝ ամենէն աւելի նշանաւոր իշխաններէն
մին էր և ընդարձակ կալուածներ ունէր
(մարդպետութիւն) Տարօնի և Վասպուրականի
մէջ² ։ Մարդպետութիւնը քրիստոնէութեան
ժամանակ ևս զոյութիւն ունէր, բայց չնչ
կարող ի հարկէ եզրակացնել աստի թէ կա-
նանոցն ևս զոյութիւն ունէր միանգամայն ։
Դ զարու մէջ մարդպետն այլ ևս ներքինի
չէր, այլ արքունի տան հարցարարէս և միան-
գամայն թագաւորին հաւատարիմ կուսակալու-
թեան զլուս, աստիկ ատելի հաւասարապէս
թէ աշնականներուն և թէ պամուրին,
որ բարձրագոյն իշխանութեան ձկնող և կրե-
րականութեան նպաստող Մամիկոնեան ցե-
ղին կատարի կուսակից մ'էր ։

Հրէական սովորութիւնք և հեթանոսական
յիշատակութիւնք կը բացատրեն մեզի հին
հայկական նուիրապետութեան բազմաթիւ
մասնաւորութիւնները, և ամէն բանէ յա-
ռաջ՝ բարձրագոյն հայրապետին եզական
զիրը ։ Թուի թէ ի սկզբան իրեն պաշտո-
նական պատուանունն էր կարողիկոս (κα-
θολικός) . վասն զի երկու պրացի աշխարհ-
ներուն մէջ ևս, ի Վիրս և յԱղուանս, գրը-
խուսը հայրապետն այս անունը կը կրէր. և
այս երկու երկիրներուն և Հայաստանի մէջ
բաւական սերտ կրօնական առնչութիւն մի

կայր հին ժամանակները¹ ։ Արեւելեան քրիս-
տոնեայք՝ եկեղեցական բարձրագոյն իշխա-
նութեան վրայ՝ աւելցուցին նաև քաղաքական
բարձր վարչութեան պաշտօնը² ։ հաւանա-
կանաբար ցուցնելու համար, թէ այն պաշ-
տօնը ունեցողն՝ թառ նշանակութեան բառին
կը համարուէր իբր առաջնորդ ընդհանուր
ազգին³ ։

Բայց փաստաւ համեմատաբար շատ սա-
կաւ անգամ կը գործածէ այս պաշտօնական
անունը Հայոց հոգեւոր բարձրագոյն պիսիս
համար. իրեն գրքին մէջ յաճախ գործածուած
սովորական բացատրութիւնք են, քահանայա-
պետ, եպիսկոպոստապետ և հայրապետ ։ Սորա
թարգմանութիւնք են հետեւեալ յունարէն
բառերուն . ἀρχιερεύς, ἀρχιεπίσκοπος և πα-
τριάρχης. Բնականաբար πατριάρχης բառը
պէտք չէ այն իմաստով առնուլ կամ հաւ-
կընալ, ինչ որ կը հասկնաւէր ապագայ զարուց
եկեղեցական կանոնադրութեան մէջ, պար-
զաբար այն պատճառաւ՝ որ փաստասի դրած
միջոց պատրիարքութեան գաղափարն զեռ
զարգանալու վիճակի մէջ էր ։ Բայց նաև
իբր պիտակ բացատրութիւն⁴, կարելի է թէ

1. Փաւստ. Գ. Ի, էջ 132-133.
2. Փաւստ. Գ. Ժ. Բ. Մովս. Խոր. Բ, Ե. Թովմա
Արծաթի Գ. Բ, էջ 128, հանուանէ ուն «Մտակ
եպիսկոպոս ոտանեն նախնական և Մարդպետա-
կանն ։ Այս արժն նախնական մէջ էր մարդպե-
տին ընտելութիւնն ։ Մարդք (էջ 162) կը կարճէ թէ
Ազաթանեղոսի մէջ (Ա. էջ 461) եղած ցուցակի
Գրիստոսէ յառաջ եղած ժամանակաց ցուցակն է, ո-
րովեան կ'ըստի . « երբոր իշխանն Մարդպետութեան
իշխանութեանն ։ Ապիսի կը յաւելու նա իմաստա-
թեանք . « Այս բանն պիտի չկորսնայ եւսաստանի աստ-
ութեանք, ով որ զարու է՝ թէ օրչափ յամուաւ
թեանք կը յարտանեն ինն անկաւ սովորութիւնք ։
Անորակոյս պաղէս պատանեցաւ նաև քրիստոնէայ
Հայաստանի մէջ ։ Կանանոցի դիտաւորն պոկնց մքա
սորցնական մէջ իբր բարձրաստիւնեն կարգը և պաշ-
տօնը, նոյն իսկ կանանոցի և նորս ներքինի պատա-
պաններու նկատուա արեւելեան սովորութեան վերցուե-
լէն վերէն սլլ ։

1. Իրաւ է թէ Հայոց կաթողիկոսն կը համարուէր
իբր « առաջին եւսաստանք մէջ — primus inter pa-
res » բայց այս բանն իբր Թեմի մեծութեան և
հարեւորութեան նոս ամենամասնական էր ։
2. 'Ο ἐπί τῶν καθόλου λόγους. Euseb. h. e. VII,
105. — 'Ο πάς καθόλου διοικητικῆς τῆς παρ' αὐτοῦ
καλουμένης μαγιστροσύνης τῆς καὶ καθολοκίτητος διε-
θῶν. VIII, 11, 2.
3. Հայաստանի և զանազից երկիրներուն մէջ աւելի
նուազայն է սոյլ յորժորումը քան Պարսկաստանի մէջ,
որ կարելի է մնայն ցուցնել այն ի զարուս սկզբը ։
Հայք նոյն յորժորումը հաւանաւ նաև կեսարից արք-
այկիսիսոսին ։ Եւսեբիոս կը կոչուէ « ἰσβαρίτωνος ἰ-
σβαρίτην (Isabartanos) յերկիրն Գամբուք » (Փաւստ. Գ.
Ի, էջ 75) ։ Ինչպէս կը պատմուի Բարսեղ լարագլու-
սին անախ, թէ բարձրագոյս կեսարից կաթողիկոսու-
կան անտօնի վրայ . և ինչո՞ք Բարսեղ յաճախ ἰσβαρί-
տանի անն կ'ըստու (Փաւստ. Գ. Թ, էջ 102) ։ Այս
Թովմաքոսն նաև պարզէ կը կաշէ զՂևնդիոս, զոր առ-
վորաբար արքայիսկական հանուանէ (A. CXIII S. 446).
Ղևնդիոսն սուրբ Ղևնդիոս, որ յայնն սոյ (G. S. 138
կը զե՛ տն օրնատատոս քալ καθολικόν Δεσπυον. Գ
զարուս մէջ զեռ եւսաստանն չէր սոյ յորժորումը,
և իբրեւի կեսարից մէջ պատրիարք անուան գործ-
ծութիւնն անգամ, սպարաբանիկ է ։ Ապիսիս սպար-
պետական կ'երեի ինձ, թէ կեսարից մետրապոլիտոս
Իսաբարտոս կամ Իսաբարտոս Իսաբարտոս կ'ըստու լինին ։
Կարելի է թէ Հայերը սուսած են իրենց սոյլ անունը ։
4. Հմմտ. Սիւրբուս. Պատմ. Եկեղ. Ե, Բ. Դ՛Յճ ձե
Ποντικῆς διοικητικῆς Ἐπιλόχειας ὁ... Καίσαρταξ, ր, 60.

պատրիարքութեան յորջորղումն Ներսիսի մահ-
 ւորնէն յետոյ հնարուեք է, երբ կետարիայէն
 հպատակութեան կասյն խղուեցաւ, որ կայր
 մինչև նոյն ժամանակ¹ իսկ թէ Փաւստոս
 իւր երրորդ պարութեան մէջ յաճախ կը գոր-
 ծածէ այն յորջորղումը, կը նշանակէ թէ ի-
 րեն միջոց գործածական եղած անունը թուելի
 հնազոյն շրջանի մէջ փոխադրեր է. վասն զի
 յառաջ կը գործածուէին միայն եպիսկոպոսա-
 պետ և քահանայապետ. թէ առաջինն է —
 ἀρχιεπίσκοπος, կը հետևի — առանց ուշ գնե-
 շու նշանակութեան — կրկին աւելաբանական
 արքեպիսկոպոսապետէն²։ Ամենաբացայայտ
 է քահանայապետ բառի յաճախ գործածու-
 թիւնն կաթողիկոսին համար։

Յոյններն այլ կը գործածեն ἀρχιερός բառը
 բարձրագոյն դասու քահանայից համար, այլ
 միայն զբազան կամ հոգեօրական ոճոյն մէջ,
 յորում բոս կարի կը զգուշանան գիտական
 և պաշտօնական անուններէ։ Փաւստոս չունի
 այն սովորութիւնը։ Քահանայապետ (ἀρχιε-
 ρός) բառը սովորական յորջորղումն է Հրէից
 գլխաւոր կամ մեծ քահանային թէ Ս. Գրոց
 և թէ ուրիշ հեղինակաց գրութեանց մէջ։
 Այս ամենասովորական յորջորղումն շատ զը-
 ժուարին է պատահական քան մի համարել,
 հին հայկական եկեղեցւոյ ունեցած հրէական
 ձևումը նկատելով³։ Ստուգիւ կաթողիկոսու-
 թիւնն շատ սակաւ նմանութիւն ունի քրիս-
 տոնեայ եպիսկոպոսութեան հետ, այլ ընդ-
 հակառակն շատ կը յիշեցնէ հրէական և
 հեթանոսական օրինակները։

Սոցա մէջ առաջին տեղը կը բռնէ կա-

թողիկոսութեան ժառանգական յաջորդու-
 թիւնը։ Սոյն իշխանութիւնն բացառիկ կեր-
 պով կապուած էր Գրիգոր Ղուասաբի տոհ-
 մին հետ. և որովհետև պէտք չէր երբէք
 դադարիլ այն, հետևաբար կաթողիկոսները
 կ'ամուսնանային զրեթէ առանց բացառու-
 թեան։ Այս բանին հետևանքն այն եղաւ՝
 որ շատ երիտասարդ անձինք կաթողիկոսական
 ամուսին վրայ բարձրացան, որ բացարձակ
 կերպով հակառակ է յետագայ ժամանակաց
 սովորութեան։ Մանուկն Գրիգորոս, Վրթա-
 նիսի որդին, հնգէտասանամեայ հասակի մէջ
 կաթողիկոս կ'ընտրուի Վրաց և Ալուանից,
 որովհետև « բարեհասակ էր և զգիտութիւն
 Աստուծոյ՝ յանձին կրէր¹ » և Այդ բանին մէջ
 արտաքին կերպարանքն ևս մեծ նշանակու-
 թիւն ունեցեր է։ Նոյնպէս իւր Յուսիկ եղ-
 քայրն, որ տասներկու տարեկան ամուսնա-
 ցեր էր, պէտք է որ շատ երիտասարդ հա-
 սակի մէջ կաթողիկոս եղած լինի։ Փաւստոս
 սովորաբար կը կոչէ զինքը « երանելի մա-
 նուկն Յուսիկ », « ցանկալի մանուկն Յու-
 սիկ » և տարօրինակ յորջորղում մի ամբողջ
 աշխարհի մի հոգեւոր գլխոյն համար Ներ-
 սէս ևս շատ երիտասարդ հասակի մէջ կ'ընդ-
 ունի իւր բարձր աստիճանը։ Թէ սրբափ
 յամուսնութեամբ պահուեցաւ այս ժառանգա-
 կան յաջորդութեան իրաւունքն եկեղեցական
 պաշտամանց նկատմամբ, կը ցուցնէ մեզ
 թիւ դարու մէջ պատահած դէպք մի, զոր
 կը պատմէ կիրակոս Գանձակեցի։ Աղուա-
 նից աշխարհին եպիսկոպոսներն և վարդա-
 պետը՝ մանկահասակ սարկաւազ մի կը ներ-
 կայացնեն Ոմար ոտտիկանին, իբր թիկնածու
 կամ ընտրուի կաթողիկոսական իշխանու-
 թեան. « Նա շատ երիտասարդ է հասակաւ »,
 կ'ըսէ ոտտիկանն, « դուք որ բուն յարմար
 տարիքը ունիք, ինչո՞ւ կաթողիկոս չէք լի-
 նիր »։ Նոյրս կը պատասխանեն. « Որովհետև
 սա կաթողիկոսաց ցեղէն է և իրեն կը պատ-
 կանի այդ զահուն իրաւունքն »։ Ինչպէս
 յայտնի է, հին եկեղեցին շատ տեղեաց

Իրցորոս 6 Νόστος. καὶ Ὁτρίως 6 τῆς ἐν Ἀρμενίᾳ
 Μελετηθῆς τῆν πατριάρχῃαν ἐκκληρώσει· վերսուս կը
 կոչէ զանոն « non veros atque ordinarios patriarchas,
 sed extraordinarios legatos ».
 1. Հ. մահ. v. Gutschmid, Kl. Schr. III S. 353.
 2. Փաւստ. Գ. ԺԵ, էջ 122. և Ե. Գ. էջ 198.
 3. Յետագայ ժամանակները շատ սակաւ անգամ կը
 զործածեն զպա. օրինակ իմ, կը զանեմ Մ. Խորե-
 նազուց մէջ Եղիշիւղոսապետ (Գ. Ի. Գ. Խ. Գ. ԽԱ.
 Գ. ԻԲ). մի անգամ միայն Գահնաշապետ (Գ. ԺԶ)
 Հայոց կաթողիկոսին համար։ Նոյնպէս կը զանեմ Ա-
 զաթանազեղոսի մէջ Եղիշիւղոս (A. էջ 468, 474), Գր-
 իղիւղոս (էջ 498, 502), Գրիգոր Երկու անգամ
 (էջ 507, ընդհակառակն, Գահնաշապետ մի անգամ
 միայն (էջ 462) և Գահնաշապետ իրեն յեջ 467.
 նոյնպէս Անտոնոս Գահնաշապետ կը զուրբ մէջ 467
 (մինչ յոյն ունի միայն ἀνοσιόπη).

1. Փաւստ. Գ. Ե, էջ 10.
 2. Կիրակոս Գանձակեցի. Է. էջ 105, հրատար-
 կութիւն Մոսկուայի յամին 1838.

մէջ ամուսնացեալ եպիսկոպոսներ ունէր¹ : Սակայն քահանայական բարձրագոյն իշխանութեան ի հօրէ առ որդի ժառանգական յաջորդութիւնը մինչև ի վեց սերունդ՝ միայն Հայաստանի մէջ կը գտնենք : Բայց այսու չէ կարելի ժխտել թէ եղբր են նաև կուսակրօն կաթողիկոսք, ինչպէս վերոյիշեալ Գրիգորիսն, և Լուսաւորչի որդին և յաջորդն Արիստակէս : Ըստ պատմութեան Ալաթանագեղոսի, վերջինս՝ իւր պաշտօնը ստանձնելէն առաջ՝ կապագովիկոյ անպատին մէջ ճգնաւորի կեանք մ'անցուցեր էր, ինչպէս վերջը կ'ընէին Միջագետաց հովիտք (Βοσχαλ)² : Այն պիտի հին ժամանակաց մէջ բնու տարօրէնակ բան մի չէր ճգնաւորական կեանքն, եթէ Ալաթանագեղոս իւր ժամանակին յատուկ և միակեցական հողոյն համեմատ ևս բրած լինէր այն նկարագիրը :

Յետապայ ժամանակաց մէջ, երբ Յունաց օրինակին հետեւելով՝ սկսան կրօնաւորաց միջէն բնորել բարձրաստիճան եկեղեցականները, և կուտութեան վրայ շատ բարձր գաղափարներ կազմեցին, բացարձակապէս անկարելի եղաւ այնուհետև ամուսնացեալ անձինք կաթողիկոս դնել : Ուստի եկեղեցական իշխանք կ'ամուսնանային այն ժամանակ իբր լոկ շախարհականք, և իրենց սերնդեան կամ յաջորդութեան հողը կարգադրելէն յետոյ՝ քահանայ կը ձեռնադրուէին : Այս բանս կրնանք հաստատել Յուական մասին, որ կաթողիկոս լինելէն առաջ կորուսեր էր իւր ամուսինը³ : Սակայն ամենին հասանական չերկիր, թէ վեց սերնդոց միջոց ևս մեռած լինին կանայք՝ իրենց գրեթէ միշտ երիտասարդ ամուսիններուն քահանայական աստիճան բնդանելէն յետոյ : Բայց ապագայ ժամանակն չի վարանեցաւ այս բանիս ևս հնարք մի գտնել : Զենոր Գլակայ⁴ պատ-

մութիւնն Ս. Գրիգոր Լուսաւորչի ամուսնական կենաց մասին՝ կրնայ այս բանիս նախատիպ օրինակ մի համարուիլ : Սա՝ երկու տասնամեայ հասակի մէջ՝ կ'ամուսնանայ բարեպաշտ Դաւթի Մարիամ զստեր հետ, և յետ երկու զաւակ ծնանելու՝ կինն կուսանաց վառք⁵ մի կը մտնէ, իսկ այրն ազատ կը լինի իւր ապագայ պաշտաման համար : Փաւստոս սակաւին տեղեկութիւն չունի ապագայ ժամանակի մէջ հնարուած այս հաստատութեանց մասին : Վրթանէս ծերութեան միջոց կ'ունենայ երկու զաւակ, յայտ է ապա թէ իբր եպիսկոպոս ևս ամուսնոյն հետ միասին կ'ապրէր : Այլ նոյն իսկ Փաւստոս, համեմատաբար մեր ամենէն աւելի յատակ աղբիւրն, համեմտիւ կ'երևի տեսութեանց կամ գաղափարներու Ներսիսի ժամանակին, որ Բարդի կեսարացոյ յիշոցաւ աստիկ ազգեցութիւն կրեր էր. իւր շափազանց սէրն և համարումն նախկին հայրապետաց վրայ և իրեն յատուկ տեսութիւնքն որբազան աստիճանի մասին, որք այնչափ փոխուեր էին իրենց նախաժամանակէն, շատ տարօրինակ հակասութեանց պատճառ կը լինի իրեն, ինչպէս կը ցուցնէ ի մասնաւորի Յուական պատմութիւնն (Գ, Ե) : Սա կը զղջայ ամուսնանալուն վրայ, զոր պարզ թագաւորէն բանադատուելուն համար յանձն առեր էր : Միւս կողմանէ սակայն Առաւօժայ ազգեցութեամբ գործեր էր, որպէս զի սուրբ հովիներու սերունդ մի յառաջ գայր իրմէ : Յետ մի անգամ մերձաւորութեան՝ կը գատուի նա իւր ամուսնէն . այլ ոչ եթէ ամուսնութիւնը իբր « աղտոզի ինչ » կը համարի : Միով բանիւ, կ'երևի թէ պատմիչն պտուրին իրաւախոսութեան մի մէջ է հին և նոր ժամանակներու տեսութեանց մէջտեղ : Շատ կասկածելի կը թուի այն պարագայն, որով թէ՛ վրթանէս և թէ՛ իւր Յուսիկ որդին երկուորեակներ կը ծնանին : Գրեթէ կը կարծուի, թէ աւանդութիւնն կ'ուզէ ըստ կարելոյն շատ կանուխ գնել վանական կենաց

1. Գեո ժԳ կանոնն Տուրի երկրորդ ժողովոյն (567) շատ համարակ կերպով կը խօսի եպիսկոպոսին կնոջ վրայ, որպէս թէ ամենաբնական բան մի լինէր :
 2. Սաուգիւ Սղոմենոս (Ջ, 36) կապագովիկոյ մասին կը հաստատէ, թէ սեղւոյն իւրտ կիթային պտուստան անկարելի էր բնակել անտապախին մէջ :
 3. Փաւստ. Գ. Ե, էլ 11.
 4. Ջ. Գլակ. էլ 22.

1. Ս. Գրիգոր գրեթէ 257ին ծնած լինելով, կարէ և հնթադրել թէ 250ին միջոցները կապագովիկոյ մէջ կուսանաց վառքեր կը գտնուէին (1) :

սկիզբը՝ նոյն իսկ ամուսնացեալ բարձրաստիճան եկեղեցականաց համար: Ինչպէս կաթողիկոսը, այսպէս նաև բնականաբար միւս եպիսկոպոսը ամուսնացեալք էին: Յովհաննէս եպիսկոպոսն՝ Փառեն կաթողիկոսի որդին է՝: Եպիսկոպոսութեան ժառանգական յաջորդութիւնն ոչ միայն սրբական՝ այլ և իրական գծով կրնար լինիլ, ինչպէս պատահեցաւ Խաղայ նկատմամբ, որ Բագրևանդայ և Արշարունեաց եպիսկոպոսն էր, և Ս. Ներսիսի ընդհանուր տեղապահը: « Եւ ունէր նա երկու զուտոր, որոցմէ մին կնութեան տուաւ Արթիկ անունով մէկուն, որ իւր աներէն վերջը՝ ինքը նստաւ Խաղայ աթոռը »: Նոյնպէս Ե պարուն մէջ Սուրմակ կը յաջողի Պարսից թագաւորէն իբր սեփական ժառանգութիւն ստանալ իրեն և իւր ցեղին համար Բզունեաց զաւառին եպիսկոպոսութիւնը, որուն եպիսկոպոսն էր ինքը՝:

Սոյն ժառանգական յաջորդութեան բնական հետեւանքն է որ, ինչպէս երբեմն Հրէից քահանայապետներուն որդւոց պատահեցաւ, այսպէս նաև կաթողիկոսաց որդոց վրայ կը տեսնուէր յաճախ բոլորովին աշխարհական հոգի մի, օտար ամենեւին եկեղեցական և կրօնաւորական հոգի: Այսպիսի աշխարհաւէր քահանայորդոց տիպարներ են Պապ և Աթանազիոսն, Յուսկան որդիքն. նոքա ասպետական՝ աշխարհաւէր և մանաւանդ թէ վայրագ կեանք մի կը վարեն: Չուր տեղ բռնի և եպիսկոպոսաց հաւանութեամբ սարկաւազ կը ձեռնադրուին. նոքա, թէ և նոյն պահուն բռնապատուած ուեղի կու տան հարկին, այլ իսկոյն կը թողուն իրենց եկեղեցական աստիճանը և Յիրաւի սոքա երկուքը շարութեան վերջին ծայրը հասած կը համարուին: Այլ նոյն իսկ Ս. Ներսէս: Արշակ թագաւորին փառաւոր սենեկապետներէն մին, բացէ ի բաց կը մերժէ յանձն առնուլ եկեղեցական

ամենաբարձր աստիճանը, երբ բոլոր ժողովն կ'ազդակէ յանկարծակի. « Պէտք է Ներսէս լինի մեր հովիւն. իրմէ դուրս ոչ ոք պիտի լինի մեր հովիւր, և ուրիշ ոչ ոք պիտի նստի այս աթոռին վրայ »: Անուշաւտ տեղ կ'ամբաստանէ նա ինքզինքը՝ իբր թէ մեծամեծ մեղքեր և ոճիրներ գործած լինի: Այս բանիս վրայ թագաւորն և բոլոր բազմութիւնն սաստիկ կը ծիծաղին: Յայտնի է թէ շատ զուարթ աեսարան մ'եղած է այն բովանդակ զիպուածն: Ինքն իսկ թագաւորն կը խէ՛ նորա ձեռքէն պոզուտով արքունական սուսերը հանդերձ ոսկեայ պատենիւ, և ականակուռ և ազամանագազարդ գօտին, որ սենեկապետութեան պատուանշանն էր. և արտասուելից բազմութեան առջև կը կտրուին նորա գանգրագեղ երկայն մաղբը, և ծերունի եպիսկոպոսն Փասասոս կը ձեռնալքէ զնա սարկաւազ: Այս դէպքերս լոյս կը սփռեն նաև, ինչպէս կ'երևի ինձ, այն տարօրինակ պարագային վրայ, որ ոչ թէ՛ էր երէց որդին՝ այլ կրտսերն Արթատակէ հետեւեցաւ եկեղեցւոյ հիմնադրին քահանայական կոչմամբ: Այլ թերևս պիտի առարկէ ոք, թէ վրթմանէս տակաւին քահանայ չէր եղած. — վերոյիշեալ ամբողջ եղանակն, որով կը բռնազատուէին ձեռնադրուիլ քահանայից որդիքն, կը ցուցնէ թէ պէտք եղած միջոց կը վիրցուէր այդ արգելը, ինչպէս ի Բիւզանդիոն՝ այսպէս նաև Հայաստանի մէջ: Անշուշտ վրթմանէս ևս ի սկզբան չուներ յօժարութիւն քահանայական աստիճանին, ինչպէս չուներին Աթմանազիոսն և Ներսէս: Հայրապետական ցեղին այս աշխարհական ընթացքն իտարրագծութեան նիւթ կու տայ, զոր թերևս պիտի կարենանք բացատրել՝ երբ յաջողինք գտնել կաթողիկոսին ընտանեաց ստոյգ ծագումը:

Շարայայրեյի

1. Փառաս. Ե. Բ. էջ 284.
 2. Փառաս. Ե, ԺԲ, էջ 111. « Եւ էին նորա (Խաղայ) երկու զուտերը, և եւ զմինն Արթիկ ունեմ կին. զմին աներոյն իւր նա կալաւ զաթոռն Խաղայ »:
 3. Ս. Իորեն. Գ. 47:

1. Փառաս. Գ, Գ, էջ 70. « Ներսէս լինի մեր հովիւ. Այլ ոք լինի մեր հովիւ բայց ի դրանէ, և ոչ ոք նստի այս յայնմ աթոռն բայց զա »:
 2. Բնականաբար պատմին այս բանիս մէջ սրբոյն մեծ խոնարհութիւնը միայն կը տեսնուի: